

Կ-003-13.08.2021-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ն

<<ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՈՒ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Հոդված 1. «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» 2001 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-276 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.6-րդ հոդվածով.

«**Հոդված 2.6.** Հաստատել 2021 թվականին Սևանա լճից ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (այսուհետ՝ ժամանակավոր ծրագիր)՝ համաձայն 7-րդ հավելվածի:»:

Հոդված 2. Օրենքով հաստատված՝ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերի 6-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.8-րդ կետով.

«6.8. 2021 թվականին Սևանա լճից ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 245 մլն մ³: 2021 թվականի ընթացքում Սևանա լճից բաց թողնվող ջրի՝ 170 մլն մ³-ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունում առաջացող լրացուցիչ գումարները (այսուհետ՝ Լրացուցիչ գումարներ) ենթակա են վճարման՝ այդ գումարների հավաքման և դրանց հաշվին ժամանակավոր ծրագրի 3-րդ մասով սահմանած ուղղություններով ոռոգման համակարգերի արդիականացմանն ուղղված նպատակային ներդրումների իրականացման համար, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հունիսի 26-ի ՀՕ-137 օրենքի 1.2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան բացված արտաբյուջետային

հաշվին՝ (այսուհետ՝ Արտաբյուջետային հաշիվ) մինչև 2022 թվականի հաշվետու ֆինանսական տարվա ավարտը: Լրացուցիչ գումարների հաշվարկման ու վճարման կարգը, ինչպես նաև դրանց հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշիվը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Արտաբյուջետային հաշվի միջոցների շրջանառությունը և պետական բյուջեի կատարման հաշվետվություններում արտացոլումն իրականացվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: Տարեկան արդյունքներով Արտաբյուջետային հաշվի միջոցների չծախսված մնացորդն ուղղվում է այդ հաշվից հաջորդ տարում կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշվով նախատեսվող բյուջետային ելքերի ֆինանսավորմանը:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել «2021 թվականին Սևանա լճից ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը» 7-րդ հավելվածով:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.

1. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես և գործում է մինչև արտաբյուջետային հաշվի միջոցների սպառումը:

2. Սույն Օրենքից բխոյն՝ կառավարության որոշումները ընդունվում են Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾՐԱԳԻՐ

**2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ՋՐԻ ԲԱՑԹՈՂՆՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ
ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021 թվականին Սևանա լճից ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը մշակված է համաձայն «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետի երկրորդ պարբերության դրույթների:

Ժամանակավոր ծրագիրը նպատակաուղղված է 2021 թվականին Սևան-Հրազդան էներգետիկ իռիգացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի ենթակայությամբ գտնվող հողատարածքների ոռոգումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ ջրաքանակ ապահովելուն:

2. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքով ամրագրված է Սևանա լճից ջրի բացթողնման առավելագույն չափաքանակ 170 մլն մ³: Ջրբացթողումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա որոշումներով ամրագրված ամենամյա չափաքանակների շրջանակներում՝ սահմանված կարգին համապատասխան:

Սևան-Հրազդան համակարգի իշխման տակ գտնվող 5 ջրօգտագործողների ընկերությունների պայմանագրերով հաստատված 31.4 հազ հա հողատարածքների ոռոգումն իրականացվում է Մարմարիկի, Ապարանի, Ազատի ջրամբարների, Մխչյանի և Ռանչպարի պոմպակայանների, Հրազդան գետի ու Սևանա լճի ջրբացթողումների միջոցով:

2021 թվականին Հայաստանի Հանրապետության համեմատաբար 12 խոշոր ջրամբարների առավելագույն լցվածությունը կազմել է 526,7 մլն մ³ 2020 թվականի առավելագույն 667,5 մլն մ³ լցվածության համեմատ թերլցվածությունը կազմել է 140,8 մլն մ³:

2021 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ ջրամբարների լցվածությունը եղել է 226.2 մլն մ³, իսկ 2020 թվականի նույն ժամանակահատվածում՝ 351.9 մլն մ³, դեֆիցիտը կազմել է 125.7 մլն մ³:

Սևան-Հրազդան ոռոգման համակարգը սնող Ապարանի, Ագատի և Մարմարիկի ջրամբարներից չնախատեսված ջրալրում իրականացնելու պատճառով 2021 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրամբարներում առաջացել է 21.43 մլն մ³ ջրի դեֆիցիտ:

Հրազդան գետի ջրատվությունը 2021 թվականի ամբողջ ոռոգման ժամանակահատվածում պլանավորվել է շուրջ 170 մլն մ³ (վերջին 4 տարիների միջին ջրատվությունը կազմում է 190.8 մլն մ³): Ինչպես փաստացի իրավիճակը, այնպես էլ գետերի բազմամյա ջրագրության տվյալները փաստում են, որ նման տարում Հրազդան գետից հնարավոր կլինի վերցնել ընդամենը 116 մլն մ³ ջուր, որը նախատեսվածից պակաս կլինի շուրջ 54 մլն մ³-ով:

Մխչյանի և Ռանչպարի պոմպակայաններով 2021 թվականի ոռոգման ողջ շրջանում պլանավորվել էր արտադրել շուրջ 14.8 մլն մ³ ջուր (պոմպակայանների շահագործումը կախված է էլեկտրական էներգիայի լարումից, մղման խողովակաշարերի տեխնիկական հնարավորություններից):

Սույն թվականի օգոստոսի 1-ի դրությամբ փաստացի արտադրվել է 13.8 մլն մ³ ջուր կամ պլանավորվածի նկատմամբ մնացել է արտադրել շուրջ 1.0 մլն մ³: Պոմպակայաններով նախատեսվել է լրացուցիչ արտադրել ևս 22.1 մլն մ³ ջուր, որի դեպքում կծախսվի նախատեսվածից շուրջ 11 մլն կՎտ/ժ ավել էլէներգիա, որն իր հերթին կառաջացնի շուրջ 450 մլն դրամի ծախս:

Սևանա լճից 2021 թվականին, նախորդ տարվա համեմատ, ոռոգման նպատակով ջրբացթողումները սկսվել են 10 օր շուտ և այդ ընթացքում արդեն իսկ իրականացվել է 19 մլն մ³ ջրառ: Տարածաշրջանի գետերում ջրի կտրուկ նվազման արդյունքում առաջացել է ջրապահանջարկի նկատմամբ դեֆիցիտ և Սևանա լճից 2021 թվականին իրականացված ավել ջրառին զուգահեռ այն լրացվել է Սևանա լճի բաց թողումների և մեխանիկական ջրարտադրության միջոցների հաշվին:

Սևանա լճից 2019 թվականի օգոստոսի 15-ի դրությամբ բաց է թողնվել 99,825 մլն մ³, 2020 թվականին՝ 115,858 մ³ և 2021 թվականին՝ 168,244 մլն մ³ ջուր, իսկ Արփա-Սևան թունելով նույն ժամանակահատվածում Սևանա լիճ է տեղափոխվել 2019 թվականին 148,246 մլն մ³, 2020 թվականին՝ 165,385 մլն մ³ և 2021 թվականին՝ 133,833 մլն մ³ ջուր:

3. ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ժամանակավոր ծրագրի հիմնական նպատակն է Սևան-Հրազդան էներգետիկ-իռիգացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող ոռոգելի հողատարածքների ոռոգումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ առաջնային հիմնական խնդիրը նաև օրենքով սահմանված ոռոգման նպատակով Սևանա լճից տարեկան բաց թողնման 170 մլն մ³ չափաքանակի ավելացումն է՝ այն դարձնելով մինչև 245 մլն մ³:

Սևանա լճից մինչև լրացուցիչ 75 մլն մ³ ծավալով ջրբացթողնման ավելացումը, 2021 թվականի ընթացքում Սևանա լճից բացթողնվող ջրի՝ 170 մլն մ³-ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մոտ առաջացող լրացուցիչ գումարների հաշվին հնարավոր կլինի ուղղել ոռոգման համակարգերի արդիականացմանը:

Տարեկան արդյունքներով Արտաբյուջետային հաշվի միջոցների չծախսված մնացորդն ուղղվում է այդ հաշվից հաջորդ տարում կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշվով նախատեսվող բյուջետային ելքերի ֆինանսավորմանը:

4. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ժամանակավոր ծրագրի իրականացումից ակնկալվում է հողերին մատակարարվող ոռոգման ջրի դեֆիցիտի մեղմում:

5. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմինը, յուրաքանչյուր տասնօրյակը մեկ, Հայաստանի Հանրապետության կառավարություն պետք է ներկայացնի համապատասխան հաշվետվություն՝ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ³) ավել բաց թողնված ջրաքանակի վերաբերյալ:

Էներգետիկայի բնագավառում լիազորված պետական մարմինը յուրաքանչյուր ամիս Հայաստանի Հանրապետության կառավարություն պետք է ներկայացնի համապատասխան հաշվետվություն՝ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը

հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ³) ավելի բաց թողնված ջրաքանակի օգտագործմամբ արտադրված էլեկտրական էներգիայի քանակության և դրա հետ կապված կատարված վճարումների վերաբերյալ:

Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը սույն ժամանակավոր ծրագրի գործողության ընթացքում իրականացնում է փորձագիտական հետազոտություններ, որոնց արդյունքները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆՁՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՈՒ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ ^[U1]2001 թվականի դեկտեմբերի 14-ի ~~N~~ ^[U2]ՀՕ-276 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.6-րդ հոդվածով.

«**Հոդված 2.6.** Հաստատել 2021 թվականին Սևանա լճից ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (այսուհետ՝ ժամանակավոր ծրագիր)՝ համաձայն ~~N~~ ^[U3]7 ^[U4]-րդ հավելվածի ^[U5]»:

Հոդված 2. Օրենքով հաստատված՝ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերի 6-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.8-րդ կետով.

«6.8. 2021 թվականին Սևանա լճից ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 245 մլն մ³: 2021 թվականի ընթացքում Սևանա լճից բացթողնվող ջրի՝ 170 մլն մ³-~~ը~~ գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մոտ առաջացող լրացուցիչ գումարները (այսուհետ՝ Լրացուցիչ գումարներ) ենթակա են վճարման՝ այդ գումարների հավաքագրման և դրանց հաշվին ժամանակավոր ծրագրի 3-րդ մասով սահմանած ուղղություններով նպատակային ներդրումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ ^[U6] օրենքի 1.2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան բացված արտաբյուջետային հաշվին (այսուհետ՝ Արտաբյուջետային

հաշիվ) մինչև 2022 թվականի հաշվետու ֆինանսական տարվա ավարտը^[17]: Լրացուցիչ գումարների հաշվարկման ու վճարման կարգը, ինչպես նաև դրանց հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշիվը (նախահաշիվները)^[18] սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Արտաբյուջետային հաշվի միջոցների շրջանառությունը և պետական բյուջեի կատարման հաշվետվություններում արտացոլումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով: Տարեկան արդյունքներով Արտաբյուջետային հաշվի միջոցների չծախսված մնացորդն ուղղվում է այդ հաշվից հաջորդ տարում կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշվով (նախահաշիվներով) ^[19]նախատեսվող բյուջետային ելքերի ֆինանսավորմանը[»]:

Հոդված 3. Օրենքը լրացնել «2021 թվականին Սևանա լճից ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը» N^[10]7^[11]-րդ հավելվածով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործում է մինչև արտաբյուջետային հաշվի միջոցների սպառումը (եթե օրենքով այլ բան նախատեսված չէ):^[12]

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾՐԱԳԻՐ

**2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ՋՐԻ ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ
ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2021^[U14] թվականին Սևանա լճից ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (այսուհետ՝ **Ծրագիր**)^[U15] ^[U16]մշակված է համաձայն «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1^[U17] ^[U18]հոդվածի երկրորդ պարբերության դրույթների:

Ժամանակավոր^[U19] **Ծրագիրը** նպատակաուղղված է 2021 թվականին Սևան-Հրազդան էներգետիկ-իռիգացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի ենթակայությամբ գտնվող հողատարածքների ոռոգումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ ջրաքանակ ապահովելուն:

2. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ^[U20]**Ը**

«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ **Օրենք**)^[U21] ամրագրված է լճից ջրի բացթողնման առավելագույն չափաքանակ 170 մլն մ³: Ջրբացթողումներն իրականացվում են ՀՀ կառավարության ամենամյա որոշումներով ամրագրված ամենամյա չափաքանակների շրջանակներում՝ սահմանված կարգին համապատասխան:

2021 թվականի հուլիսի 15-ի դրությամբ, 2019 թվականի՝ որպես նորմալ ջրատվության տարվա նույն օրվա համեմատ, ջրամբարներում առկա ջրի դեֆիցիտը կազմել է 345.43 մլն մ³: 2021թ. օգոստոսի 1-ի դրությամբ ջրամբարների լցվածությունը եղել է մլն մ³ 226.21 մլն մ³ , իսկ 2020 թ.՝ 351.98 մլն մ³, դիֆիցիտը՝ 125.77 մլն մ³ : 2021թ. հուլիսի 15-ի դրությամբ Սևան-Հրազդան ոռոգման համակարգը սնող Ապարանի, Ազատի և Մարմարիկի ջրամբարներում դիֆիցիտը 2019թ. համեմատ կազմել է՝ 36.32 մլն մ³, իսկ 2021թ օգոստոսի 1-ի դրությամբ 2020թ. համեմատ դիֆիցիտը կազմել է՝ 21.43 մլն մ³: Անխուսափելի է նաև ջրի դեֆիցիտ Սևան-Հրազդան համակարգը սնող Հրազդան գետի ջրատվությունում՝ հուլիս-սեպտեմբեր

ամիսներին: Սևան-Հրազդան համակարգի իշխման տակ գտնվող 31.4 հազ հա հողատարածքների ջրապահովվածության հաշվարկներում նախատեսվել է Հրազդան գետի ջրատվությունն 2021թ. ամբողջ ոռոգման ժամանակահատվածում պլանավորվել է շուրջ 170 մլն մ³ (վերջին 4 տարիների միջին ջրատվությունը կազմում է 190.8 մլն մ³), սակայն գետերի բազմամյա ջրագրության տվյալների համաձայն սակավաջուր տարում այդ ամիսների Հրազդան գետից կանխատեսվում է վերցնել 116 մլն մ³ ջուր նախատեսվածից շուրջ 54 մլն մ³ պակաս: Մխչյանի և Ռանչպարի պոմպակայանները 2021թ. ոռոգման շրջանում շահագործելու համար պլանավորվել է 14.8 մլն մ³ ջուր, սակայն սակավաջրության պատճառով նշված պոմպակայանների շահագործմամբ ավելացվել է 22.1 մլն մ³ լրացուցիչ ջուր (պոմպակայանների շահագործումը կախված է էլեկտրագիայի լարումից, մղման խողովակաշարերի տեխնիկական հնարավորություններից), որի արդյունքում կծախսվի նախատեսվածից շուրջ 11 կՎտ/ժ ավելի շատ էլեկտրագիա, որը իր հերթին կառաջացնի շուրջ 450 մլն դրամի լրացուցիչ ծախս:

Այսպիսով, 2021 թվականին համակարգի ոռոգման ջրի դիֆիցիտը կկազմի.

Հրազդան գետից՝ 54 մլն մ³,

Ազատի, Ապարանի և Մարմարիկի ջրամբարներից՝ 21.43 մլն մ³

Ընդամենը՝ 75.43 մլն մ³, Մխչյանի և Ռանչպարի պոմպակայանների պլանավորածից ավելի 22.1 մլն մ³ ջրառ իրականացնելու պարագայում, այլապես դիֆիցիտը կկազմի 97.53 մլն մ³:

Սևանա լճից հուլիսի 15-ի դրությամբ 2019 թվականին բաց է թողնվել 48.264 մլն մ³, 2020 թվականին՝ 62.208 մլն մ³ և 2021 թվականին՝ 115.015 մլն մ³ ջուր, իսկ Արփա-Սևան թունելով Սևանա լիճ է տեղափոխվել համապատասխանաբար 2019 թվականին 136.947 մլն մ³, 2020 թվականին 153.726 մլն մ³ և 2021 թվականին 127.525 մլն մ³ ջուր: [U22]

3. ԾՐԱԳՐԻ [U23] ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆՈՒՐՆԵՐԸ

Ծրագրի [U24] հիմնական նպատակն է Սևան-Հրազդան էներգետիկ-իռիգացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող ոռոգելի հողատարածքների ոռոգումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ առաջնային հիմնական խնդիրը նաև օրենքով սահմանված ոռոգման նպատակով լճից տարեկան բաց թողնման 170 մլն մ³ չափաքանակի ավելացումն է՝ այն դարձնելով մինչև 245 մլն մ³:

Լճից մինչև լրացուցիչ 75 մլն մ³ ծավալով ջրբացթողնման ավելացումը, ըստ նախնական գնահատականների, հնարավորություն կտա նաև Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգի ՀԷԿ-երում լրացուցիչ արտադրել ևս շուրջ 44 մլն կՎտ.ժամ էլեկտրաէներգիա: Սևան-Հրազդան

կասկադի հիդրոէլեկտրակայաններում արտադրված էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունների հասույթի և կատարած ծախսերի տարբերությունից առաջացող շահույթը կուղղվի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նպատակային ներդրումներ իրականացնելուն: [U25]

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱՎՆԿԱՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացումից ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

- 1) հողերին մատակարարվող ոռոգման ջրի դեֆիցիտի մեղմում,
- 2) ոռոգում իրականացնող կազմակերպությունների մոտ մեխանիկական ջրարտադրության փոխարինում ինքնահոսով և էլեկտրաէներգիայի մասով նոր պարտքերի չձևավորում: [U26]

5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

~~«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-րդ կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ³) ավել բացթողումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով՝ ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմնի ներկայացրած կանխատեսումային առաջարկությունների հիման վրա: [U27]~~

Ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմինը յուրաքանչյուր տասնօրյակը մեկ Հայաստանի Հանրապետության կառավարություն պետք է ներկայացնի համապատասխան հաշվետվություն՝ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-~~րդ~~ րդ [U28] կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ³) ավել բաց թողնված ջրաքանակի վերաբերյալ:

Էներգետիկայի բնագավառում լիազորված պետական մարմինը յուրաքանչյուր ամիս Հայաստանի Հանրապետության կառավարություն պետք է ներկայացնի համապատասխան հաշվետվություն՝ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը

հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-րդ կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ³) ավելի բաց թողնված ջրաքանակի օգտագործման արդյունքում արտադրված էլեկտրական էներգիայի քանակության և դրա հետ կապված կատարված վճարումների վերաբերյալ:

Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը սույն ծրագրի գործողության ընթացքում իրականացնում է փորձագիտական հետազոտություններ, որի^[U29] արդյունքները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը^[U30] և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին^[U31]:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին>> օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	<< կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) լրիվ անվանման հիշատակումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին, որի համաձայն՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են	Ընդունվել է:	

			<p>օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը: (,,,)»:</p>		
2.	«Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	<p>Նախագծի 2-րդ հոդվածով՝ Օրենքի հավելված հանդիսացող Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների տարեկան եւ համալիր ծրագրերի՝ (այսուհետ՝ տարեկան եւ համալիր ծրագրեր) «Ջրային ռեսուրսների եւ կենսապաշարների օգտագործման չափաքանակների սահմանումը» վերտառությամբ 6-րդ բաժնում նոր լրացվող 6.8-րդ կետում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:</p>	Ընդունվել է:	

3	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	<p>. Նախագծի 2-րդ հոդվածում նախատեսված է հետևյալը՝ «Օրենքով հաստատված՝ Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների տարեկան եւ համալիր ծրագրերի 6-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.8-րդ կետով.</p> <p>«6.8. 2021 թվականին Սեւանա լճից ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչեւ 245 մլն մ3: 2021 թվականի ընթացքում Սեւանա լճից բացթողնվող ջրի՝ 170 մլն մ3 -ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության եւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մոտ առաջացող լրացուցիչ գումարները (այսուհետ՝ Լրացուցիչ գումարներ) ենթակա են վճարման՝ այդ գումարների հավաքագրման եւ դրանց հաշվին ժամանակավոր ծրագրի 3-րդ մասով սահմանած ուղղություններով նպատակային ներդրումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան բացված արտաբյուջետային հաշվին (այսուհետ՝ Արտաբյուջետային հաշիվ): Լրացուցիչ գումարների հաշվարկման ու վճարման կարգը, ինչպես նաեւ դրանց հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի</p>	Ընդունվել է:	
---	-------------------	---------------------	--	--------------	--

			<p>նախահաշիվը (նախահաշիվները) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: (...)»:</p> <p>Մեջբերվածի կապակցությամբ նշենք հետևյալը`</p> <p>1) Տարեկան եւ համալիր ծրագրերի 6.7-րդ կետում արդեն իսկ կիրառված են «Լրացուցիչ գումարներ» եւ «Արտաբյուջետային հաշիվ» կրճատ տարբերակները: Մինչդեռ, Նախագծի 2-րդ հոդվածով տարեկան եւ համալիր ծրագրերի 6-րդ բաժնում լրացվող 6.8-րդ կետում նույն կրճատ տարբերակների սահմանումն իրավական շփոթի տեղիք է տալիս «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի տրամաբանության համատեքստում, որի համաձայն` «Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով` իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը»: Ինչպես նաեւ հարկ է նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն` «Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները` որոշակի հերթականությամբ»:</p> <p>Նշվածով պայմանավորված` առաջարկում</p>		
--	--	--	--	--	--

			ենք վերախմբագրել քննարկվող հատվածը՝ բացառելով իրավական շփոթը:		
4	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	<p>«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաեւ՝</p> <p>1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.</p> <p>2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը»:</p>	Ընդունվել է:	
5	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	<p>Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 6.8-րդ կետում նախատեսված է, որ «Լրացուցիչ գումարների հաշվարկման ու վճարման կարգը, ինչպես նաեւ դրանց հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշիվը (նախահաշիվները) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: Ուստի առաջարկում ենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-</p>	Ընդունվել է:	

			<p>րդ հողվածի 5-րդ մասի տրամաբանության հաշվառմամբ Նախագծի անցումային դրույթում նախատեսել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:</p>		
6	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հողված	<p>Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հողվածով լրացվող 6.8-րդ կետում կիրառված «(նախահաշիվները)» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հողվածի 8-րդ մասը, որի համաձայն՝ «Եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաեւ այդ բառի հոգնակիի վրա եւ ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ, կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից»:</p>	Ընդունվել է:	
7	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հողված	<p>Նախագծի 3-րդ հողվածով Օրենքում լրացվող «2021 թվականին Սեւանա լճից ջրի բաց թողնման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը» վերտառությամբ 7-րդ հավելվածի (այսուհետ՝ Հավելված) ներածական հատվածում 2021 թվականին Սեւանա լճից ջրի բաց թողնման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագրի համար առաջին իսկ կիրառումից հետո, իբրեւ կրճատ</p>	Ընդունվել է:	

			տարբերակ, սահմանված է հետևյալը՝ «այսուհետ՝ Ծրագիր»): Մինչդեռ, Օրենքում նույն կրճատ տարբերակը սահմանված է նաև 2017 թվականին Սեւանա լճից ջրի բաց թողնման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ եւ 2018 թվականին Սեւանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագրերի պարագայում, ինչն էլ իրավական շփոթի է հանգեցնում Օրենքի շրջանակներում «Ծրագիր» եզրույթի մեկնաբանման տեսանկյունից: Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք շտկել վերը քննարկված իրավական շփոթը:		
8		Նախագծի 7-րդ հավելված	Հավելվածում Օրենքի անվանման կրճատ տարբերակի հիշատակումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին: Բացի այդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի տրամաբանությունից բխում է, որ կրճատ տարբերակի հիշատակումը կատարվում է առաջին իսկ կիրառումից հետո: Ուստի առաջարկում ենք օրենքի անվանման կրճատ տարբերակ սահմանելիս պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:	Ընդունվել է:	
9	ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ հավելված	Հավելվածի մի շարք հատվածներում կիրառված են հապավումներ, օրինակ՝ ՀՀ կառավարություն, էլէներգիա, ՀԷԿ եւ այլն: Միաժամանակ նշենք, որ մեկ դեպքում	Ընդունվել է:	

			կիրառված է միեւնույն բառի հապավումը, այն է՝ ՀԷԿ, իսկ մեկ այլ դեպքում ամբողջական տարբերակը՝ հիդրոէլեկտրոկայան:			
10	ՀՀ կառավարություն	Նախագծի հավելված	7-րդ	Նշենք, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»:	Ընդունվել է:	
11	ՀՀ կառավարություն	Նախագծի հավելված	7-րդ	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաեւ բառերի կամ տերմինների հապավումներ»: Վերոշարադրյալի հաշվառմամբ առաջարկում ենք ապահովել Հավելվածում կիրառվող բառերի ձեւակերպումների համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի՝ վերը մեջբերված դրույթներով սահմանված պահանջներին:	Ընդունվել է:	

12	ՀՀ կառավարություն	Նախագծի հավելված	7-րդ	Հավելվածի «Ներկա վիճակի վերլուծությունը» վերտառությամբ 2-րդ բաժնի 2-րդ պարբերությունում նախատեսված է հետևյալը՝ «2021 թ. օգոստոսի 1-ի դրությամբ, ջրամբարների լցվածությունը եղել է մլն մ3 226,21 մլն մ3, իսկ 2020թ. (...)»: Առաջարկում ենք վերախմբագրել տվյալ հատվածը:	Ընդունվել է:	
13	ՀՀ կառավարություն	Նախագծի հավելված	7-րդ	Հավելվածի մի շարք նախադասություններ ձեւակերպված են ոչ բավարար հստակությամբ:	Ընդունվել է:	
14	ՀՀ կառավարություն	Նախագծի հավելված	7-րդ	Հավելվածի 2-րդ կետում նախատեսված է հետևյալը՝ «Մխչյանի եւ Ռանչպարի պոմպակայանները 2021թ. ոռոգման շրջանում շահագործելու համար պլանավորվել է 14.8 մլն մ3 ջուր, սակայն սակավաջրության պատճառով նշված պոմպակայանների շահագործմամբ ավելացվել է 22.1 մլն մ3 լրացուցիչ ջուր (պոմպակայանների շահագործումը կախված է էլեկտրոգիայի լարումից, մղման խողովակաշարերի տեխնիկական հնարավորություններից), որի արդյունքում կծախսվի նախատեսվածից շուրջ 11 կՎտ/ժ ավելի շատ էներգիա, որը իր հերթին կառաջացնի շուրջ 450 մլն դրամի լրացուցիչ ծախս»: վերախմբագրման կարիք ունի:	Ընդունվել է:	
15	ՀՀ կառավարություն	Նախագծի հավելված	7-րդ	Նախագծի 4-րդ հոդվածում նախատեսված է հետևյալը՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից եւ գործում է մինչեւ արտաբյուջետային հաշվի միջոցների սպառումը (եթե	Ընդունվել է:	

			<p>օրենքով այլ բան նախատեսված չէ)»:</p> <p>Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտը ունենում է եզրափակիչ մաս, եթե սահմանվում են՝</p> <p>1) նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ժամկետները.</p> <p>2) գործողության ժամկետները, երբ նորմատիվ իրավական ակտը կամ դրա առանձին մասը նախատեսված է սահմանափակ ժամկետով գործողության համար (ժամանակավոր ակտ կամ ժամանակավոր դրույթ): Այս դեպքում նշվում է ակտի կամ դրա առանձին մասի գործողության հստակ ժամկետը»:</p> <p>Հարկ ենք համարում ընդգծել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտի գործողության ժամկետը կարող է սահմանվել միայն այդ նորմատիվ իրավական ակտի եզրափակիչ մասում: Բացի այդ, քննարկվող հոդվածում սահմանված է նորմատիվ իրավական ակտի գործողության ժամկետը հստակ կերպով սահմանելու պահանջ:</p> <p>Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք վերանայել եզրափակիչ մասը ընդգծված հատվածով:</p>		
--	--	--	--	--	--

16	<<Պատիվ ունեմ>> խմբակցություն	Օրենքի նապագիծ	Առաջարկվում է Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 6,8 կետի առաջին նախադասության մեջ նշված <<245 մլն մ3>> թվերը փոփոխել <<170 մլն մ3>> թվերով և Օրենքում փոփոխություններ չիրականացնել:	Չի ընդունվել:	
----	----------------------------------	----------------	---	---------------	--